

տկարացընելու տեղը շատ անգամ նաև
կը զօրացընէ :

Ուսմանց մէջ, ինչպէս նաև քաղաքականութեան մէջ, զգոյշ կեցիր կուսակցութիւններէ, և անոնց զրութիւններէն կամ կարծիքներէն : Վճռէ դըրութիւնները որ կարենաս հասկընալ, ուրիշներուն հետ բաղդատել ու վրան դատաստան ընել, բայց անոնց գերի մ'ըլլար : Ի՞նչ օգուտ տեսան իրենց հակառակութիւններէն Արիստոտելի, Պղատոնի և ուրիշ փիլիսոփայից գովիչներն ու պարսաւիշները, և կամ Արիստոն ու Խամսոն գովոյները ու վար զարնողները : Այս կուռքի պէս պաշտուած ու գետնէ գետին զարնուած խմաստունները ինչ էին նէ ան մնացին . անով ոչ մէյմէկ աստուածներ եղան և ոչ մէյմէկ անխելքներ . իսկ որոնք որ իրար անցեր էին զանոնք սուտ կշոռներու մէջ կշռելու՝ ծաղր եղան, և աշխարհը անոնց աղաղակներէն չարչարուեցաւ՝ բայց բան մը չսորվեցաւ :

Ի՞նչ ուսման ետևէ ալ իյնաս՝ նայէ որ ձեռքէ չճգես հանդարտ մոքով ընտրութիւն ընելն ու բարակամուռթիւն զիտողութիւն ընելը, վերլուծութիւն ընելու համբերութիւնը և շարագրութեան ոյժը, և ամէն բանէ ալ աւելի՝ հատատուն կամք ունեցիր ամենսեին արգելքներէն չյաղթուելու, և ըրած յաղթանակներուդ վրայ չհարտանալու . այս ինքն կամք ունեցիր միտքդ լուսաւորելու՝ որչափ որ Աստուած թոյլտուեր է, քաջութեամբ՝ բայց առանց յանդգնութեան :

Փէ՛ Ա. Ա. Բ. Ո. Յ.

Խմաստասէր ոմն երկուս ստացեալ աշակերտս, ոմն ջանացող և անմիտ և միւսն մտացի և հեղդ . և ընդ չուսանելն նոցա, ՚ի բաց վարեաց յինքենէն ասելով . ՚ի կորուստ և վեցին երկորեանդ, զի մինդ կամիս և ոչ կարես, իսկ միւսդ կարես՝ և ոչ կամիս :

ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԼՈՒՐ ԵՒ ՏԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ա.

Հայաստան :

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ վառվըռուն կտրիճներն և գրիճներն բաւական չափելով իրենց ընդհանուր հայրենիքը հռչակել, գովել, մեծցընել, անոր մէջ ալ Արկադիոյ գաւառը գերազանց գովելի և իբրև երանելեաց տեղ մը կը ցուցընեին, և մեծ պարծանք էր կարենալ ըսեն՝ թէ յաւ ես Արկադացի . յաւ ես յԱրկադիոյ : Տակնուվրայ եղած է հիմայ Արկադիա ալ, բոլոր Յունաստանն ալ. սակայն դեռ այս օրուան օրս ալ Յունաստան Յունաստան է, բոլոր պարծենկոտ յարոսայի մը պարծենկոտ մայրն է . հոն կը փնտուեն մուսայից բնակարանը : — Իսկ իմ հայրենիքս Հայաստան ինչու այսօր ալ չըլլայ Հայաստան . միթէ մուսայից բնակարանէն աւելի բան չկայ իր մէջ փնտուելու . որ աշխարհքին մէջն էր Ճշմարիտ Արկադիայն, դրախտն Ագեմական . Ոլիմպոսի թեթեազար մուսայըն՝ Աստիսու նաժիշտներն չեն, որ իրենց մայրենի երկրին կորուսեալ երանութիւնը կ'երգեն անդադար բանաստեղծից քնարներովն . ամէն սիրտ մէկ կը քով մը, ամէն քնար մէկ երգով մը կը բարախիւ, ամենուն սկիզբն ալ այն երանութեան փափազն է՝ որուն բնակարանն ալ, վայելողքն ալ միայն Հայաստանի մէջ եղած են : Ալ թողում Յունաց իրենց Յունաստանն, կ'ընտրեմ ինծի իմ Հայաստանս . և մանաւանդ հիմայ՝ որ ոչ միայն հեռաւոր ծագմանս սիրով, հապա աչքով ալ տեմնելով կը զգամ՚ի սրտիս պարծանք մը ըսելու, թէ յաւ ես ՚ի Հայաստանեայց . յաւ ես Հայկազուն :

(Կտար երկիր ծնած և մեծցած, սրտիս ձգմամբը իմ հայրենեացս աշ-

խարհքը արդէն ինծի մօտեցուցած էի .
և թէպէտ զուրկ մնացեր էի շատ լու-
րողացւոց կրթութիւններէն , բայց չէի
կրնար առանց նախանձու տեսնել և
լսել՝ որ անսնք իրենց հեռու աշխարհք-
ներէն , Ալսինի բլուրներէն , Անայի ,
Դամուբայ և Ալսպայ ափունքներէն ,
Ֆինլանտիոյ խորչերէն՝ ելեր կ'երթան
Հայոց հայրենիքը քննելու , և Հայաս-
տանի բնիկ որդիքն թողեր են օտարաց
իւր դանձերը փնտուելու , իւր փառքը
հռչակելու , վսեմական հնութիւնը նո-
րոգելու , գեղեցիութիւնը վայրելու , և
խորհուրդները թարգմանելու՝ շատ
հեղ անհարազատ խմասներով : Այս
բաներուս վրայ դարձնելով միտքս՝
սկսայ չտեսնել իմ տկարութիւնս , և
երկայն ժամանակի բազմանքով մղուած
վերջապէս ելայ իմ ծնելական պանդըխ-
տութեան երկրէս , և բնիկ աշխարհիս
հողուն դիմեցի : Վիտէի որ Հայաս-
տանի պէս աշխարհք մը լաւ քննելու
համար՝ շատ դիտութիւններ պէտք էր
ունենալ , որոնցմէ շատն ոչ ունէի և ոչ
ալ ստանալու հասակն և առիթն ունէի .
անոր համար դիմացս մեծ ու շատ նպա-
տակներ զգի . ուզեցի աւելի պատմա-
կան և աշխարհազրական աշքով տես-
նել այն տեղուանքն՝ որմնց վրայ ազ-
գային պատմութիւնը սրտաւուչնան-
ներ զբած էր , և հոն տեղուանքը ան-
ցած գացած դէպերը՝ ետ կանչել , գի-
տել , քննել , չորս հինգ տարի շրջա-
գայութեանս մէջ՝ չորս հինգ հազար
տարեկան մարդ մը ըլլալ , և այնչափ եր-
կայն գարերու մէջ աշխարհք եկած ազ-
գակցացս հետ կենցաղավարիլ : Այսոր
համար հետո հաւատարիմ ընկերաց
պէս կը պտըտցընեի քանի մը ազգային
պատմիչներ , քանի մ'ալ օտարազգեաց
Հայաստանի ճամբորդութիւններ , ո-
րոնք տեսածներուս հետ բազգատելով
ամանց սիալմունքներն ուղղեցի իմ ստո-
րագրութեանցս մէջ : ...

Բայց ինչ էր որ յիշեցի . . . ափան :
Հոս պէտք է երկայն հառաջանք մը
քաշեմ : Հայաստանի ճամբան ընկած
ատենս՝ սիրոս խորացած , բերանս լուս ,

զիս բոլորամին աշք դարձած կը կարծէի .
իսկ Հայաստանէն դարձած ատենս՝
սիրտս ուռած , աչուլներս գոյած՝ մէ-
կէն աւելի բերնի կալոտութիւն կ'ի-
մանայի տեսածներս և զգացածներս
պատմելու համար , և իմ հայրենասէր
համազգեացս յիշատակ մը թողլու յոյ-
որ՝ քաշած աշխատանքներս կը մոռա-
ցընէր : Դաժբաղդ դիպուած մը հիմայ
աշխատանքներս կը յիշեցընէ , յոյս կը
մոռացընէ : Աեծ տօնավաճառէ մը
դարձող հարուստ վաճառականի պէս՝
երկայն առեւտրութեանս պտուղը իրըն
թէ զգուցի մը կամ քսակի մը մէջ ամ
փոփած՝ ծոցո կը կրէի իմ Հայաստանի
ուղերութեն նկարագրութիւն . Պայլ
զետէն անյնելով նորէն իմ ծննդեան
տեղն գալու ատեն , գետը իրացընէ
գայլ մը դարձաւ ինծի , իր անգութ-
յորձանքներուն մէջ ծածկեց տարա-
խմբախմբութիւն և մտքիս յիշատակարանները ,
որոնք իմ ծերութեանս միսիթարանք կը
յուսային երկու սիրելի զաւակաց պէս
երկու հասորիկ տպագրով աջ ու ձախ
զիս զբած : Հազիւ քանի մը թերթ
մնաց քովս , որ հին քարերու վրայէն
հանած գրուածքներ էին և քիչ մ'ալ
նկարագրութիւն տեղեաց . զոր թէ որ
բարեկամներս ձեռքէս ցի խլէին՝ յուսա-
հատութեանս ատեն՝ ջրին եղբօրը կրա-
կին ծոցը պիտի ձգէի : Բայց անոնք ոչ
միայն թող ցի տուին , հապա շատ յոր-
դորեցին ալ որ նորէն նատիմել յիշողու-
թեանս մէջ անջինջ մնացած տեղեկու-
թիւնները մնացած թղթերուն զրուածք-
ներով կարկատելով , գտնէ բոլորին
տեղ մաս մը ընծայեմ ազգասէր հայրե-
նակայացս : Այս վախճանովս է աչա որ
քանի մը կտոր բան պիտի հրատարա-
կեմ Հայաստանի վրայօք , և յիշողու-
թեանս կամ թղթերուս թողուցածին
համեմատ երբեմն մեծ մեծ քայլերով
հեռուէ հեռու պիտի ցատքեմ . երբեմն
ալ զաւառէ զաւառ կը թռչիմ : Բայց
շատ հեղ ալ պզտի տեղի մը չորս դին կը
պտըտիմ , և ուրիշներուն սովորութե-
նէն աւելի ալ կը կենամաեղ տեղ , կամ
աւելի լու լու լու մ' կը կեցընեմ իմ ըն-

թերցողս՝ թէ որ ախորժի ինծի ընկերութիւն ընկել . և հօն կեցած ատեն զինքը հետո հեռու և Հայաստանէն դուրս աշխարհքներու մէջ ալ երբեմն կը հրաւիրեմ, վերջը նորէն առջի տեղը կը դառնանք իրեւ մեր իջևանը, ինչուան որ նոր տեղ մ'ալ իջնենք, կամ Հայաստանի յիշատակաց մէջ նոր յիշատակ մը զմեզ յափշտակէ :

Արդարիւ յիշատակաց աշխարհ՛ Հայաստան, և մեծ և շատ և հին և սուրբ յիշատակաց, սիրելի և զուարձալի և խնդալի և ահուելի յիշատակաց : Իշխարհք մը, որուն աշխարհազրութիւնը մարդկութենէ առաջ կը սկսի, պատմութիւնը՝ մարդկութեան հետ, հանդէմները՝ երկրիս ամենէն պայծառ օրերուն մէջ : Իշխարհք մը որ ամէն աշխարհքէ առաջ բնակուած, մշակուած և քաղաքավարած է : Իշխարհք մը որ գեռ իր լեռնահովիտներուն մէջ կը ցուցանէ Երանելեաց գաւառը . և իր բարձր սարերուն վրայ՝ Վասեաց ուսը՝ երկրորդ մարդկութեան որորանը, ուսկից ուժանձինք իջնալով բոլոր երկիրս կը բազմամարդեն :

Հայաստան աշխարհ՛, որուն քաղաքներն և գեղերն չորս հինգ հազար տարուան անուններ ունին . որուն լեռներն և ժայռերն նոյնալէս հին բերդերու հիմննիք ունին :

Հայաստան աշխարհ՛, որ երկրիս երևոյթներուն մեծ մասը իր մէջ ալ կը ցուցընէ . երկնաձեմ լեռներ, բիւրեղանման սարեր, ձերմակ ու սե ուսեր, կապուտ կանաչ կողեր, գոյնզգոյն քարերով բլուրներ, բնութեան ձարտարապետութեամբը կանզնած բուրգեր և սիւներ ջրանման քարերով . մեծամեծ հրաբուխներ, մարած՝ բայց ու բոլորովին իրենց տաքութիւնը մոռցած :

Հայաստան, աշխարհ՛ ջրոց և գեղեցիկ ջրոց, եղեմական քառալոտակ գետոյն, քաղցր և աղի ծովանման լշերու, մեծամեծ գետերու, անթիւ պայծառ առուակներու և աղբիւրներու, ջերմ և ցուրտ և հանքային ջրերու, երադա-

սահ և մեծաշառաց քարավեմ հասանկը ներու :

Հայաստան, աշխարհ՛ բովուց և հանքաց, թէ հաղական և թէ փշրական նիւթոց և թէ կիզանիւթ զիւրավառ մարմնոց :

Հայաստան, աշխարհ՛ գեղեցիկ հայտաց, գեղեցիկ դաշտաց, ամենաբայս, ամենածաղիկ, ամենահայտ, մեղաքահոտ, ամենագոյն, պտղաշատ, հացաւէտ, մեղրաբուղիս, մանանայաքեր, ծիրանաներկ, բժշկարմատ, բժշկահող . մէկ խօսքով՝ դրախտին ծնող և ազգակից կամ արենակից, թէ որ կրնայ այսպէս ըսուիլ :

Հայաստան, աշխարհ՛ սւերակաց և մնացուածոց շինից . իրաւ ոչ Եղիպատական և Հնդկական կամ Յունական մեծագործութեանց, սակայն և ոչ աննշան՝ քարեղին քաղաքաց, անձաւաբնակ քարյրից, անկոխելի լեռնազագած բերդերու, հաստակառոյց հեղեղալուծ կամուրջներու, քարալերանց գագաթեն մինչեւ 'ի յատակ փորած սանդիսաւոր ջրհորներու, գետնափոր ջրանցքներու, և ջրանցքի տակ գետնաձամբաներու . անթիւ հին եկեղեցեաց և վանորեից, մոտրանց և խաչվիմաց : Իշխարհքան զամէն աշխարհ՛ հարուստ սրբազան արձանազրութեամբք :

Հայաստան, աշխարհ՛ գերեզմանաց՝ նահապետաց, հսկայից, Հայկազանց, Իշխակունեաց, և շատ ազգաց, շատ թագաւորաց, շատ բռնաւորաց, հանգըստարան շատ սրբոց և վկայից :

Հայաստան, աշխարհ՛ մահու և պատերազմաց . ուր առաջին կեանք ընծայուեցաւ և առաջին մահու լաց եղաւ . ուր իրեւ 'ի վրէժ նախկին երջանկութեանն՝ ամենայն պատերազմող ազգք և մեծագոյն զօրավարք աշխարհ՝ դիմեցին գաւառ մը խլելու կամ չափ մը արիւն թափելու . Ի՞ւլ, Ի՞նսոս, Շամիրամ և Իսորեստանեայք . Վիաքսար, Իժդահակ և Վալք . Վեսոսար և Եղիսպատացիք . Կիւրոս, Վարեհ և Պարսք . Վղեքսանղը և Յոյնք . Վնտիոքոս և Վորիկ . Վրակ և Պարթեք . Լուկուլոս, Պոմպեոս, Կորբուլոնք և

Հռոմայեցիք . Արտաշիր , Շապուհք և Ասսանեանք . Վատիւռաչման , Վըրուան , Խզիտ , Յուսփ և Հագարացիք . Տուղիլ և Վկիւթք . Մէլիք շահ և Խուլքք . Դինկիդ , Հովլազուն և Խաթարք . Թողունք ալ յիշելու Ենկթիմուրներն , Աքանտարներն , Շահաբաններն , Կատիր շահերն . Թողունք հին ու նոր ազգերն , Հոնք , Մշանք , Քիւրտք , Ովկւրքմէնք , (Սմանեանք , Ռուպք , և այլն :

Հայաստան , աշխարհ քրիստոնէութեան , որ քրիստոնէութենէ առաջ գիրիստոս հրաւիրեց , ուր շատ առաքեալք և աշակերտք շրջեցան , ուր անթիւ վկայք նահատակեցան , և շատ սրբոց նշխարք գնացին , ուր անթիւ անհամար տաճարք կանգնեցան Աստուծոյ . և ուր վկայից արիւնը ամէնդար ալ անդադար ուուգեց . ուր սև հողերն ալ շատ՝ կարմիրներն ալ շատ . եպիսկոպոսարաններն և վանքերն ալ բաղմաթիւ :

Հայաստան , աշխարհ վաճառականութեան , որ Ասիոյ առաջին կարստաններն քայցուց , և երկայն դարեր անոր ամենէն ճարտար գործակալներն եղաւ ցամաքի վրայ , և ճարտար ձեռնաւորներն , և թարգման Լուրոպիոյ :

Հայաստան , աշխարհ մուսայից , որ առաջին անդամ մարդկեղէն միտքը տարքացած տեսաւ քարերու կամ ծառերու կեղեցոց վրայ . որ առաջին երգերը և սրբազնն մաղթանքներն յօրինեց . որ առաջին կրօնից վարդապետութիւններն և ծէսերն նկարագրեց . որ առաջին տօմարն կարգագրեց . որ աստուածաշնորհ զբերով աստուածաշունչ զըրքերը լեզուին ամենէն գեղեցիկ ոձովն թարգմանեց . որ յունական հանճարոյն նախանձորդ և դպրութեանցը գանձարանն եղաւ ատեն մը . որ շատ պատմազիններ հանեց և շատ աւանդութիւններ պահեց , որուն բոլոր աշխարհք երախտապարտ է :

Հայաստան աշխարհ , ծնողք երեւլի մարդկանց , նահապետաց , յարեթական քաջազանց , զօրավարաց Ասիոյ ,

մեծագործ թագաւորաց նաև աշխարհակալ իշխողաց , անթիւ իշխանաց և ազատաց , իմաստնոց , սրբոց և Ճարտարաց :

Հայաստան , աշխարհ ոչ միայն սիրոց և կենաց , որ հոս նախ բացուեցան , այլ և ցաւոց և ողբոց , թշնամիներէն և ազգայիններէն պատճառած հաղարու մէկ դիպուածներով :

Հայաստան աշխարհ , առաջին՝ մարդկութեան յիշատակաց մէջ , և իբրև վերջին թողած նաև իրեն բնիկ որդւոց շատերուն մտաց մէջ

Իսյոյ մինչև ցերք չկանչեմ , թէ Հայաստան աշխարհ հայրենասիրաց , որ ամենէն հին երկիր և ամենէն հին ազգ ըլլալով , աւելի նոր ու իբրև թէ բոլորովին ջնջած ազգաց մէջէն ալ դուրս կը կանգնես ծերացած այլ անմահ գլուխդ . և այնքան բազմադարեան միխիններու տակէն ալ եռանդուն կայծեր կը քալցրնես զքեզ սիրող որդւոց սրտերուն մէջ . որոնք յաւիտենական յուսով մը քաջալերուած երբէք զքեզ չեն մոռնար . նա մանաւանդ զքեզ մոռնոյներն ալ իրենց մոռացութեան վչէն հանելով՝ յիշատակաց գետոյն եղերլի կ'ուզեն քալցրնել . և տանիլ գէպ 'ի անոր աղբիւրը , որ Լադեմայ աղբերը սկզբնակից է : Այսու յուսով քաջալերուած ես ալ կ'ելլէմ կը զիմեմ ընծայելու քեզի իբրև սիրասութեան՝ առ ցանկալի ծնողը՝ իմ սիրաս հանդերձ իր արիւնու վը , իմ ազքս հանդերձ իր արցունքովն զոր ընդունելով ներէ իմ ակամայ պակասութեանցս կամ սիրալմանցս այս առաջարկած շրջապատմութեանս մէջ , որուն անշուշտ պիտի ներես , նաև քաջալեր պիտի տաս՝ եթէ ասոր պատճառաւ ինձի ուզեկից ըլլող ընթերցողը ալ քեզի նուիրեն իմինիս նման ընձաներ :

Հոս յարմար կը սեպեմբեր Կահապետին մէկ նկարագրութիւնն ալ դնել այսպիսի նիւթոյ մը վրայ :

Եմաքօսուն դըռնակն է բաց
 Ելել արեւդ հայաստանեաց :
 Եմա ենեն որք կան 'ի քուն ,
 Ու Ա,ահապետն այլ որ անքուն ,
 Յաստուածազարդն ենե հանդէս
 Հայ հայրենեացն ենե 'ի տես :
 Ելներ եներ նա մինչ յի՞նոս
 Օ աշերն ածել ընդ չորս բոլորս՝
 Երք սեաւ գիսակն էր ձակատուն ,
 Ոտկունքն արագ էր քանց այծուն .
 Յաստուածազարդ եներ հանդէս
 Հայ հայրենեացն եներ 'ի տես :
 Դուք որ սարերտ 'ի վեր երթայք ,
 Եւ իմ սիրուն կտըրձնուորայք ,
 Դէմ թէ զգալար աշուիդ սիրէք՝
 Ա,ահապետին մըտիկ արէք .
 Յաստուածազարդ ելէք հանդէս
 Հայ հայրենեացդ ելէք 'ի տես : —
 Եմա ելանք 'ի մեծ հանդէս
 Հայ հայրենեացս ելանք 'ի տես .
 Եմա տեսանք զաշխարհն Հայոց՝
 Ու ըզգրախտիկն առել 'ի ծոց
 Դէմ երկընուց կայր կանքնըման ,
 Ենդրանկածին մօրըն նըման :

Եմա եներ արեւն յամպոց
 Վ արդ կու թափէր յաշխարհն Հայոց .
 Յօղըն տեղայր զով ու սիրուն
 Օ ինչ մարդարիտն 'ի սատափուն .
 Կարմիր կանաչ ծին ծիրանի
 Գոտի ածուէր Հայաստանի :
 Երանց սարերըն բարձրածայր
 Ուկի պըսակ եղան հաւաար .
 Հայոց գետերն հազարաւոր
 Եջանէին ձանձնաւոր .
 Հազար թէ գետ , բիւր թէ առուի
 Հայոց ծովսկքն այլ աւելի :
 Եւ դրախտի ջրեր իջէք իջէք
 Օ երկիրն Հայոց արբեցուցէք :
 Եմա վտակունք կըրկընային
 Չորս ու հովիտ արբենային
 Յամէն կաթէն աստղիկ եներ ,
 Յամէն ծընէն ծաղիկ ծընէր :
 Եմա տեսանք զծաղկունքն Հայոց
 Պայնն էր երկնից , հոտըն խընկոց .
 Վ արդն ու շուշան էին վառման
 Հարսնամատերն 'ի ջուր փրուման .
 Նօրու մօրուն էր տարածել
 Բ զտեսողաց ացքըն բաղել :

Եմա տեսանք զհաւերն Հայոց
 Չայնք հրեշտակի , գոյն էր ծաղկոց .
 Ո ուունկ ու արագիլ գային հիտրաց՝
 Վ արիսներուն սիրտըն ձըխաց .
 Ե րեղաձագ , սարեկ , արտուտ ,
 Կ աքւուկ , պըլպուլ վարդակարօտ :
 Եմա տեսանք մեծ կարաւան
 Ե չորս դիհաց ելեր կու գան .
 Ք ուրդըն կու գայր յարօտ ամուան
 Հ օտերն 'ի հետ շարան շարան .
 Օ ասրըն առեալ աղջկունք հիւսեն ,
 Մ անկունք 'ի սառն աղքիւրս խըմեն .
 Եմա տեսանք զվաստակն Հայոց ,
 Ս երմըն թափէլ էր յերկընուց .
 Հ ոն որ Ե գամ վարէր քութան
 Ք անց ըզգրասուն հասկերըն տան .
 Հ ոն որ Ե բէլ զգառն ընծայէր
 Մ աքիքն ածեն միշտ ջուխտըկներ .
 Հ ոն որ զայգին է տընկեր Կոյ
 Ո սկի ողկոյզք են խաղողյ .
 Կ աթն այն՝ կըրծքի , գինին բազկի ,
 Պ ուրն հասիաթ է ամենի :
 Եմա տեսանք զխորանքն Հայոց
 Կ ամար կապեր են յերկնից ծոց .
 Ե կեղեցեաց թիւն հազարով ,
 Մ ատրունք՝ սրբոցն են համարով .
 Լ ուունկըն ծըխէ առտու ըիկուն
 Մ ստուած առնու զհուուըն սիրուն :
 Եմա տեսանք զքարերն Հայոց
 Ե եր հայրերուն մահուան օրոց .
 Գ երեգմիներըն լոււ էին
 Խ աչվէմքն 'ի քովն աղօթէին .
 Տ էրն ողորմի հանգուցելոց ,
 Ե ւ ամենայն երկիրս Հայոց :
 Եմա տեսանք զերկինք սրայծառ՝
 Ը ըրթներն երկրիս Հայոց հաւսար .
 Հ աւերն 'ի հունչ , հովերն 'ի շունչ
 Օ դըն վառվառ , ջուրն 'ի մրմունջ .
 Ո ուսիկս է ձոխ , արես անուշ .
 Մ արերն 'ի վար ինջնումք մեք ուշ .
 Եմա 'ի գունսն երթայր արե .
 Ա,ահապետին մենք տանք բարե : —
 Ե ւեր Կ,ահապետն այլ ձեզ բարե ,
 Մ ստուած վերէն՝ ձեզ շատ արե .
 Ե միր գնացէք դուք յայդ հանդէս
 Հայ հայրենեացդ ելէք 'ի տես :